ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «20» 02 2018թ № 20-Ա

«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման 14-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝
   1) «Զբոսաշրջության զարգացման 2018 թվականի ծրագիրը»՝ համաձայն N 1 հավելվածի.
   2) «Զբոսաշրջության զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը» ՝ համաձայն N 2 հավելվածի:

ԶԱՐՄԻՆԵ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի
2018 թվականի «փետրվարի » « 20 »
N 20 -Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

2018ԹՎԱԿԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ի. ՆԱԽԱԲԱՆ

1. Միավորված Ազգերի Կազմակերպության Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ-ի ԶՀԿ) տվյալներով՝

1) վերջին հինգ տարիներին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 4.5 տոկոս,
2) 2017 թվականին միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը հասել է 1.322 միլիարդի: Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է շուրջ 7 %, ինչը լավագույն ցուցանիշն է վերջին 7 տարիների ընթացքում, քանի որ 2010 թվականից ի վեր այն կազմել է շուրջ 4 %:
3) 2016 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունները համաշխարհային մակարդակով կազմել են շուրջ 5-6 միլիարդ:
4) Ըստ կանխատեսումների 2018 թվականին դրական միտումը կպահպանվի և միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կշարունակի աճել ևս 4-5 տոկոսով:

2. Վիճակագրական տվյալներով՝

1) 2017թվականին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1.494.779՝ շուրջ 18.7տոկոսով ավելի քան 2016 թվականին,
2) վերջին հինգ տարիներին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 9.0 տոկոս,
3) 2016թվականին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 871888՝ 1.4 տոկոսով ավելի, քան 2015թվականին,

4) 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 944937՝ 8.9 %-ով ավելի քան 2016 թվականի հունվար-սեպտեմբերին:

Ներգնա զբոսաշրջային այցելությունների աճն ըստ տարիների



II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել՝

1) «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.
2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի հունիսի 22-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը.
3) 2008 թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

4. Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել՝

1) Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական ավելացմանը՝ մինչև 2022 թվականը հասցնելով տարեկան 3.0 միլիոնի,
2) Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը,
3) ազգային եկամտի ավելացմանը,
4) բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,
5) պատմամշակութային ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը,
6) Հայաստանի և հայ ժողովրդի համաշխարհային ճանաչելիության ու հարգանքի բարձրացմանը,
7) Հայաստան - Սփյուռք կապերի ու հայապահպանության ամրապնդմանն ու զարգացմանը,
8) Հայաստանի, որպես աշխարհում ամենագրավիչ զբոսաշրջային երկրներից մեկի, նկարագրի ձևավորմանը,
9) համամարդկային արժեքների պահպանությանը, զարգացմանը, խթանմանը, միջազգային համերաշխության և խաղաղության ամրապնդմանը և այդ գործընթացներում Հայաստանի դերի բարձրացմանը:

IV. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Ծրագրի նպատակի իրականացման համար ծրագրային միջոցառումներն ուղղված են հետևյալ խնդիրների լուծմանը՝

1) ամրապնդել և շարունակական բարձրացնել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը,
2) դիվերսիֆիկացնել հայկական զբոսաշրջային արդյունքը, ձևավորել նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքներ,
3) դիվերսիֆիկացնել Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի շուկաները, սահմանել գերակա նպատակային շուկաներն ու իրականացնել նպատակային մարքեթինգ և խթանում,
4) ապակենտրոնացնել զբոսաշրջությունը դեպի ՀՀ մարզեր, այդ թվում նաև գյուղեր,

5) համաշխարհային շուկայում ամրապնդել, զարգացնել և խթանել Հայաստանի նկարագիրը՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր,
6) բարելավել և զարգացնել ենթակառուցվածքները,
7) ամրապնդել և շարունակական բարձրացնել ծառայությունների որակը,
8) զարգացնել մարդկային ռեսուրսները,
9) խթանել զբոսաշրջության ոլորտի նկատմամբ հանրային հետաքրքրությունը և շահագրգռվածությունը, շահագրգիռ կողմերի միջև ապահովել ընդհանուր տեսլականի ձևավորում ու արդյունավետ համագործակցություն,
10) աջակցել զբոսաշրջության բնագավառում գործող, մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների գործունեությանը,
11) ամրապնդել և շարունակական ակտիվացնել միջազգային համագործակցությունը:

V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6. 2018 թվականին ծրագրային միջոցառումներն ուղղված կլինեն

1) զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ապահովմանը և համակարգմանը, այդ թվում առկա խնդիրների բացահայտմանը, առաջնահերթությունների գնահատմանը, զարգացման ծրագրերի և բյուջեի մշակմանը, շահագրգիռ կողմերի միջև համագործակցության և հետադարձ կապի ապահովմանը,
2) ակտիվ և թիրախային մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացմանը, այդ թվում թիրախային շուկաներից լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների՝ Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպմանը, թիրախային շուկաներում մարքեթինգային միջոցառումների կազմակերպմանը, թիրախավորված գովազդատեղեկատվական նյութերի մշակմանը և տարածմանը, էլեկտրոնային մարքեթինգի իրականացմանը, միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, ճանաչողական և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող հաղորդումների մշակմանը և հեռարձակման ապահովմանը: Առավելագույն ջանքեր են գործադրվելու մարքեթինգային և խթանման միջոցառումներում Արցախն առավել ակտիվորեն ներգրավելու ուղղությամբ,
3) հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, այդ թվում նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորմանը, զբոսաշրջության ապակենտրոնացմանը

դեպի հանրապետության մարզեր, պատմամշակութային ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը, զբոսաշրջության այլընտրանքային ձևերի զարգացմանը, քայլարշավային երթուղիների մշակմանն ու միջազգային շուկայում ներկայացմանն ու խթանմանը, ավանդական փառատոների ու տոնակատարությունների կազմակերպմանը,

4) մարդկային ռեսուրսների զարգացմանը, այդ թվում՝ Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի գործունեությանն աջակցությանը, ոլորտը որակյալ և պահանջարկին համապատասխանող կադրերով ապահովմանը,

5) միջազգային համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանը, այդ թվում ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ համագործակցության առավել ակտիվացմանը, երկկողմ համագործակցության ամրապնդմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի արդյունավետ ինտեգրմանը, Հայաստան -Սփյուռք կապերի ամրապնդմանը:

VI. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

7. Ծրագրի իրականացումը նախատեսվում է ապահովել շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ:

VII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

8. Զբոսաշրջության զարգացման 2018 թվականի ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 198 միլիոն դրամի չափով, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

Զբոսաշրջության պետական կոմիտեի
նախագահ

Զարմինե Զեյթունցյան

Հավելված N 2
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի
2018 թվականի «փետրվարի» « 20 »
N 20 -Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Պատասխա-նատու կատարողները (համակատա ողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսա վորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ						
1.1	Զբոսաշրջության միջգերատեսչական խորհրդի շրջանակներում, ինչպես նաև պետություն– մասնավոր հատված ձևաչափով համագործակցության ապահովում	Զբոսաշրջության ոլորտին առնչվող հարցերով պետական մարմինների աշխատանքների մեկտեղում, Մասնավոր հատվածից և այլ շահագրգիռ մարմիններից ստացված հարցերի համատեղ քննարկում, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների մշակում ու ներկայացում Պետության, միջազգային գործընկեր կառույցների, մասնավոր հատվածի և	Միջգերատեսչական խորհրդի առնվազն 4 նիստի գումարում և դրանց արդյունքում առաջարկությունների մշակում և ներկայացում Պետություն, մասնավոր հատված, միջազգային գործընկերներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի ձևաչափով առնվազն 10 քննարկումների կազմակերպում և համապատասխան առաջարկությունների մշակում	Զբոսաշրջության պետական կոմիտե	2018թ. ընթացքում	

		Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև համագործակցության ապահովում Զբոսաշրջության ոլորտի համակարգում և հետադարձ կապի ապահովում	և ներկայացում			
2. ՄԱՐՔԵԹԻՆԳԵՎ ԽԹԱՆՈՒՄ						
2.1.	**Էլեկտրոնային մարքեթինգի ապահովում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում www.armenia.travel կայքում, ինչպես նաև Ֆեյսբուք (facebook) և սոցիալական այլ ցանցերում WiFi ցանցերով Հայաստանը գովազդող էլեկրտոնայինբաներների տեղադրում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի համաշխարհային շուկաներում պատշաճ ներկայացում և խթանում՝ ճանաչելիության բարձրացում	Կայքի և սոցիալական ցանցերի էջերի վարում, տեխնիկական սպասարկում, բովանդակության մշակում, թարգմանություն www.armenia.travel կայքի հասանելիություն առնվազն երկու լեզվով www.armenia.travel կայք այցելություններ՝ առնվազն 800 000, Facebook պաշտոնական էջում հետևորդների քանակը՝ առնվազն 60 000, Instagram պաշտոնական էջում հետևորդների քանակ՝ առնվազն 40 000,	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			Google որոնողական համակարգում հանգուցային բառերի միջոցով առաջնակարգ դիրքավորում: Հաղորդակցման վարում Twitter, YouTube, Google+, VK, Odnoklassniki, Telegram, Tumblr, Pinterest - սոցիալական ցանցերում			
2.2	**Գովազդատեղեկատվական նյութեր բոլոր նպատակային շուկաների համար**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում, Հայաստանի զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ տեղեկատվության տարածում թվային հարթակներում	1)30-40 վայրկյան տևողությամբ առնվազն 3 տեսահոլովակի պատրաստում և տարածում www.armenia.travel ինտերնետային կայքում և այլ թվային հարթակներում, - առնվազն 4 լրատվանամակների ուղարկում թիրախային կոնտակտների շտեմարանով 2) առնվազն 5 ժամ տևողությամբ տեսաբազայի ստեղծում՝ մարքեթինգային տեսանյութեր պատրաստելու և տարածելու նպատակով 3) Գովազդային փաթեթների առնվազն երեք լեզվով մշակում (այդ թվում բովանդակության	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			թարմացում և թարգմանություն), տպագրում և տարածում տեղեկատվական կենտրոններում, միջազգային ցուցահանդեսներում, ՀՀ դեսպանատներում, www.armenia.travel կայքում և սոցիալական ցանցերով՝ առնվազն. - 3500 բրոշյուր - 20500 քարտեզ - 40500 տեղեկատվական թերթիկ 1 էջի վրա - 10 ռոլափ և բաներ (մշակում, տպագրություն, տեղադրում) - HD որակի լուսանկար՝ առնվազն 100 հատ լուսանկարների զետեղում գովազդատեղեկատվական նյութերում, տարածում սոցցանցերում, թվային մարքեթինգի այլ հարթակներում 4) մարքեթինգային նյութերի հրապարակում՝ - ռուսական MaximaS tables հարթակում - առնվազն 1 ուղեցույցի հրապարակում՝ ըստ նպատակի և հնարավորության (Полиглот, LonelyPlanet, այլ)			

2.3.	**Նպատակային շուկաներում մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում**	Հայաստանի, որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդում, զարգացում և խթանում	Հայաստանը ներկայացնող առնվազն 2 գովազդային արշավի իրականացում նպատակային շուկաներում (շնորհանդեսների, մշակութային միջոցառումների կազմակերպում, հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում, գովազդային վահանակի տեղադրում)՝ ըստ նպատակի և հնարավորության Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում, Նիդեռլանդներում, Շվեյցարիայում, Վրաստանում կամ այլ նպատակային շուկաներում, ՀՀ դեսպանությունների հետ համագործակցությամբ	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2. 4	**Հայաստանյան և նպատակային շուկաներից օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և գրավչության բարձրացում հայաստանյան և օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների միջոցով	Հայաստանի մասին տեղեկատվական նյութերի (տպագիր կամ էլեկտրոնային հոդված, տեսահոլովակ) հրապարակում առաջատար մասնագիտացված պարբերականներում և սոցիալական ցանցերում. -առնվազն 4 նպատակային շուկաներից առնվազն 30	Զբոսաշրջության պետական կոմիտե	2018թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	կազմակերպում		լրագրողների, զբոսաշրջության մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում -Հայաստանի և Արցախի զբոսաշրջային արդյունքը ներքին շուկայում և Սփյուռքում ներկայացնելու և խթանելու նպատակով հայաստանյան լրագրողների համար առնվազն 3 ճանաչողական այցերի կազմակերպում			
2. 5	**Սփյուռքում մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում**	Սփյուռքում հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և գրավչության բարձրացում Սփյուռքի հայկական համայնքների հետ համագործակցության ակտիվացում՝ համագործակցելով ՀՀ արտաքին գործերի նախարարության և արտասահմանում հայկական ներկայացուցչական մարմինների հետ	Սփյուռքի առնվազն 3 համայնքների ներգրավում Սփյուռքի առնվազն 5 պարբերականներում տպագրված գովազդային հոդվածներ Սփյուռքի առնվազն 1 ռադիոկայանի միջոցով հաղորդաշարի մեկնարկ՝ ըստ նպատակի և հնարավորության «Վանա ձայն» ռադիոկայան կամ այլ ռադիոկայանների միջոցով Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացնող «Երազի երկիր» հաղորդաշարի	Զբոսաշրջության պետական կոմիտե, Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			մեկնարկ /10 ռադիոեթեր			
2. 6	**Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին**	Հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում, ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում՝ արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ	Մասնակցություն և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում առնվազն 4 միջազգային, հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներում՝ ապահովելով յուրաքանչյուր ցուցահանդեսին առնվազն 5 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն, ինչպես նաև «PROFI TRAVEL» առցանց ցուցահանդեսում	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2. 7	**Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը**	Երևանում և ՀՀ մարզերում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորում Գառնիի, Գորիսի, Դիլիջանի, Գյումրիի, Սևանի, Մեղրիի և «Զվարթնոց» օդանավակայանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին ֆինանսական, տեղեկատվական և մեթոդական աջակցության տրամադրում Տեղական ինքնակառավարման	Պետական աջակցություն ՀՀ մարզերում և օդանավակայանում առնվազն 7 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		մարմինների կամ այլ շահագրգիռ գործընկերների կողմից աջակցության պայմանով (առնվազն տրամադրելով անվճար տարածք)				
		3. Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, փաթեթավորում և խթանում				
3.1	**Մարքեթինգային միջոցառումներում զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների ընդգրկում**	Զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր արդյունքների պատշաճ փաթեթավորում և ներկայացում միջազգային և ներքին շուկաներում (այդ թվում՝ մարքեթինգային միջոցառումներ ուղղված «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր», «Գինու զբոսաշրջություն» «Ռուսական հետք», և այլ զբոսաշրջային արդյունքների ներկայացմանն ու խթանմանը միջազգային շուկայում՝ ըստ նպատակի և հնարավորության)	Առնվազն 4 արդյունքի՝ արկածային, կրոնական, էկո, պատմամշակութային, մարզական, առողջարանային, քարանձավային, արդյունաբերական, էնո, ագրո զբոսաշրջային արդյունքների մշակում, քարտեզագրում, տուր փաթեթի գծագրում, թվայնացում և ինտերնետային կայքում տեղադրում: Տեղեկատվական նյութերում, ճանաչողական այցերի ծրագրերում, շնորհանդեսներում զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր արդյունքների ներառում	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

3.2	**ՀՀ մարզերում ավանդական փառատոների կազմակերպում**	Համայնքներում համաչափ տարածքային տնտեսական և զբոսաշրջության զարգացմանը նպաստում, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ու մրցունակության բարձրացմանը, տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնմանն ու զարգացմանը, հյուրընկալող և շրջական համայնքներում տնտեսական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը նպաստում	Պետական աջակցությամբ առնվազն 5 ավանդական փառատոների պատշաճ կազմակերպում Յուրաքանչյուր փառատոնին առնվազն 10 տաղավարով տեղական ավանդույթների, տնտեսական, այդ թվում զբոսաշրջային ներուժի ներկայացում Փառատոնի վերաբերյալ դրական արձագանքներ, մամուլի հրապարակումներ Փառատոնը հյուրընկալող և շրջակա համայնքներից դրական արձագանքներ, առաջարկություններ, ինչպես նաև նորամուծություններ, նոր գաղափարների, ապրանքների և ծառայությունների առաջարկ	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր) Համագործակցելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ՀՀ մշակույթի նախարարության ՀՀ գյուղատնտեսության նախարարության Համապատասխան	2018թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

				տեղական ինքնակառավարման մարմինների հետ		
3.2.1.	Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում «Թութ» խորագրով «Սյունյաց ավանդույթներ» փառատոնի կազմակերպման համար	«Սյունյաց ավանդույթներ» փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Արենի» փառատոն» հիմնադրամի հետ Առավելագույն ջանքերն կգործադրվեն փառատոնը նաև Արցախում կազմակերպելու համար Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 3500 մարդ, որից 800 ավելի շատ օտարերկրյա զբոսաշրջիկ			2018 թ. հուլիս	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.2.2	Պետական աջակցություն «Մեդիա Օնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում պատմամշակութային վերածննդին նպաստող	Փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Մեդիա Օնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ Փառատոնի ընթացքում կներկայացվի ՀՀ մարզերի և			2018թ. օգոստոս	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	փառատոնի կազմակերպման համար	ԼՂՀ-ի գորգագործությունը, դեկորատիվ և կիրառական արվեստները, հուշանվերները Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 3500 մարդ, որից 700 օտարերկրյա զբոսաշրջիկ				
3.2.3	Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ «Գինու» փառատոնի կազմակերպման համար	«Գինու» փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Արենի» փառատոն» հիմնադրամի հետ Փառատոնին կներկայացվի հայկական գինեգործության ավանդույթը, գինու զբոսաշրջության ներուժը Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 12000 մարդ, որից 3000 օտարերկրյա զբոսաշրջիկ			2018թ. հոկտեմբեր	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.2.4	Պետական աջակցություն Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման	«Խորոված» խորագրով Ավանդական ուտեստների մրցույթ- փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր Հայ խոհարարական			2018թ. օգոստոս	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ

	հասարակական կազմակերպությանը՝ ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում «Խորոված» խորագրով Ավանդական ուտեստների մրցույթ-փառատոնի կազմակերպման համար	ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպության հետ Փառատոնը կնպաստի Հայաստան-Վրաստան տարածաշրջանային միասնական զբոսաշրջային արդյունքի ձևավորմանն ու համաշխարհային շուկայում ներկայացմանն ու խթանմանը Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 5500 մարդ, որից 1300 օտարերկրյա զբոսաշրջիկ				աղբյուրներ
3.2.5	Պետական աջակցություն Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպությանը՝ ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ գյուղում «Տոլմա» խորագրով Ավանդական ուտեստների մրցույթ-	«Տոլմա» խորագրով Ավանդական ուտեստների մրցույթ- փառատոնի փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպության հետ Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 3000 մարդ, որից 700 օտարերկրյա զբոսաշրջիկ			2018թ. մայիս	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	փառատոնի կազմակերպման համար					
3. 3	Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարության կազմակերպում	Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարության պատշաճ կազմակերպում Հայաստանի զբոսաշրջության արդյունաբերության ձեռքբերումների ներկայացում, տարբեր բնագավառների ներկայացուցիչների խրախուսում	Զբոսաշրջության արդյունա-բերության ներկայա-ցուցիչների մասնակցություն, մամուլի հրապարակումներ, արձագանքներ	Զբոսաշրջության պետական կոմիտե	2018թ. սեպտեմբեր-հոկտեմբեր	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3. 4	Քայլարշավային երթուղիների մշակում	Առնվազն 30 քայլարշավային, լեռնադահուկային և հեծանվային երթուղիների մշակում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Նատուրա տուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ	Երթուղիների տեղադրում մասնագիտացված ինտերնետային կայքում (www.wiciloc.com)՝ հայերենով և անգլերենով	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						

4.1	Պետական աջակցություն «Հայ զբոսավարներ իգիլդիա» հասարակական կազմակերպությանը զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի գործունեությունն ապահովելու նպատակով	Զբոսավարների ուսուցման և վերապատրաստման ապահովում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Հայ զբոսավարների գիլդիա» հասարակական կազմակերպության հետ	Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի բնականոն գործունեության ապահովում, առնվազն 10 միջազգային զբոսավարների վերապատրաստում	Զբոսաշրջության պետական կոմիտե Հայաստանի զբոսաշրջային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ, հիմնադրամի հետ կնքելով համապատասխան պայմանագիր)	2018 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ						
5.1	**Միջազգային համագործակցություն**	ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ համագործակցության առավել ակտիվացում	Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդում և շարունակական բարձրացում Համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի արդյունավետ ինտեգրում Համամարդկային արժեքների պահպանությանը, զարգացմանը, խթանմանը,	Զբոսաշրջության պետական կոմիտե Համագործակցելով ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ	2018թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

			միջազգային համերաշխության և խաղաղության ամրապնդման Հայաստանի դերի բարձրացում Միջազգային երկկողմ կապերի ամրապնդում և զարգացում Հայաստան սփյուռք կապերի ու հայապահպանության ամրապնդում ու զարգացում			

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Զ.ՉԵՅԹՈՒՆՑՅԱՆ